

**ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ Ա. ԲԱԿՈՒՆՅԻ «ԿՅՈՐԵՍ» ՎԻՊԱԿՈՒՄ
(ՀԱՄԵՄՍՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

Մհեր Քումունց

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

<https://orcid.org/0000-0001-5496-3783>

mherkumunts@gmail.com

Բակունց Ալլա

Հայաստան, Գորիսի պետական համալսարան, ուսանող

allabakunc34@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-08-0-229

Դարձվածքներին վերաբերող աշխատանքները բավականին շատ են: Սովորաբար հաճախ են հանդիպում որևէ հեղինակի, ստեղծագործությունների, լեզվի դարձվածային համակարգի, գրական լեզվի, բառապաշարի, դարձվածային կազմի ուսումնասիրությունները: Այս դեպքում մեր ուսումնասիրության նյութը վերաբերում է Ա. Բակունցի ստեղծագործությունների այն դարձվածքներին, որոնք ունեն բարբառային ծագում և տակավին կարոտ են լուսաբանման: Ստեղծագործությունը Ա. Բակունցի «Կյորես»-ն է, որը հայ գրականության ոսկեդենահյուս գլուխգործոցն է, որտեղ Բակունցը օգտագործում է դարձվածքները և բարբառը՝ կերպարների հոգեբանության, սոցիալական դիրքի և իրականության արտահայտման համար:

Բանալի բառեր. դարձվածք, բարբառ, Գորիս, «Կյորես», Ա. Բակունց:

Ուսումնասիրության մեթոդը

Ինչպես գիտենք, դարձվածքներն առաջանում են զանազան

տեսակի բառակապակցություններից՝ վերախմաստավորման և այլաբերական-փոխաբերական նշանակություն ստանալու միջոցով: Ա. Բակունցի ստեղծագործությունների դարձվածքների մեծ մասը, լինելով բարբառային, կենդանի խոսքում գործածական, ուսումնասիրության այլ մոտեցում է պահանջում: Այս առումով առավել շահեկան է զուգադրական մեթոդը, այսինքն՝ բնագրից դուրս բերված դարձվածքը համեմատել Սյունիք-Արցախի բարբառային տարածքի՝ կենդանի խոսքում առկա դարձվածքային միավորին, գտնել տարբերություններն ու նմանությունները, հնարավոր զուգահեռները գրական հայերենում և նրա խոսակցական այլ տարբերակներում:

Ուսումնասիրության նյութը

Տեսական գրականության ընձեռած նյութը հավաստվում է Ա. Բակունցի ստեղծագործություններում ընդգրկված դարձվածքներով, ապա դրանց բարբառային տարբերակներով: Քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրելու և բացահայտելու հեղինակի՝ դարձվածքների գրականացման միտումները, միջոցները, եղանակները:

Գորիսի բարբառի դարձվածքային արտահայտությունները

Գորիսի բարբառը հարուստ է դարձվածքներով, որոնք պատկերավոր կերպով արտացոլում են տեղական մարդկանց բնավորությունն ու մտածելակերպը: Այս դարձվածքները կենցաղից ու առօրյա իրավիճակներից եկող արտահայտություններ են, որոնք հաճախ ունեն այլաբանական իմաստ և ունեն կյանքից վերցրած դասեր կամ հոգեբանական արժեքներ: Այժմ կրեթենք մի քանի օրինակներ «Կյորես» վիպակից, որպես գրական միավորներ՝ զուգահեռները բերելով Գորիսի բարբառից:

1) «Ղաթրինի Աղալոն, որ բեռնած էշը գետնից բարձրացնում էր»։ [էջ 4 1]։

«Բեռնած էշը գետնից բարձրացնող» - «ֆիզիկական մեծ ուժ ունեցող, տոկուն անձ»։ Այս դարձվածքի Գորիսի բարբառում առկա համարժեքն է՝ «պեռնա՝ծ էշը տափան պիրցըցնիլ», որն արտահայտում է «անհավատալի ֆիզիկական ուժ կամ տոկունություն ունենալ» իմաստը, ինչը Գորիսի մարդկանց համար հաճախ հարգանքի արժանի հատկություն է։ «Ղաթրինի Աղալոն» հետաքրքիր կերպար է «Կյորեւում», որն իր մեջ խտացնում է տեղացիների պատկերացումները՝ կապված ուժի և համառության հետ։

2) «Ղաթրինի Աղալոն կարող էր վաճառակններից երեքին Խուրձի Թոկով Շալակել»։ [էջ 5], «Խուրձի Թոկով շալակել» - «ուժով լինել»։ Բարբառային համարժեքն է՝ «փընջի քա՝նդիրա՝վ շիլա՝կ իլ» - «ուժը պատել, վախեցնել»։

3) «Այնքան ընդարձակ էր Գորիսի բանտը, որ կարող էր շենի կեսը մեջն առնել»։ [էջ 5] «Մեջն առնել» - «տեղ գրավել, տեղ գրադեցնել»։ Բարբառային արտահայտությունն է՝ «տըղվարիլ»։

4) «Օբին Գզգզված շորերով էր, ինչպես հետին մուրացկան»։ [էջ 5] «Հետին մուրացկան» - «անմխիթար, ցնցոտիավոր»։ Ներկա օրերում անվանական այս կապակցության համարժեքն է «տըռա՝ն բօմժ ինէր, կարծում ենք, որ այս արտահայտության դարձվածքային համարժեքն է՝ «շըլվարին թի՝լը ծի՝քես, հազար կըրկատան կըթափվի», կամ՝ «թօ՝նդիրո՝ւմն էլ տըրան մըկլավէտը կա՝լ չի»։

5) «Հայհոյում էր Կյորեսը կույր դանակով մորթողներին» - «տանջահար անել (հոգեպես)» [էջ 6], բարբառային համարժեքն է՝ «քօ՝ո տի՝նա՝կա՝վ մօրթի՝լ», - «տանջել, չարչարել»։ Վիպակում

¹ Բոլոր օրինակները բերված են Ա. Բակունցի «Կյորես» ստեղծագործությունից, «Անտարես» հրատարակչություն, 2022։

«կույր դանակով մորթողներին» դարձվածքը պատկերավոր կերպով նկարագրում է նրանց, ովքեր հոգեբանական և բարոյական վնաս են հասցնում հին ու մաշվող քաղաքին:

6) «Ծիծաղում էին, ինչպես եթե հրապարակում կապիկ պար ածեին»: [էջ 6] – «անվերջ ծիծաղի ձայն հանել, ծաղրելով ծիծաղել»: Բարբառային համարժեքն է՝ «Հրոհըռում ին հունց վեր հըրըպարակում կապիկ էն պար ածում» - «ծաղրի առարկա դարձնել», հմմտ. նաև՝ «Բեա՞րո՞ւո - բէյսըրա՞թ անի՞լ», «ծաղրել»: Այս արտահայտությունը նկարագրում է այնպիսի ծիծաղ կամ զվարճանք, որը քաղքենի սովորույթի արդյունք է:

7) «Սկսում էր Խաղ ասելով տեսնել Գորիսի քաղաքացիներին»- «երգել»: [էջ 6]

Բարբառային արտահայտությունն է՝ «Խաղ ըսիլավ պան չէս շինի» - «երգել, դիտարժան ինչ-որ բան անել՝ պարել, նվագել»:

8) «Գյուղում ասում էին, որ Գորիսեցիք խոսում են շան լեզվով - «օտար լեզվով խոսալ», [էջ 7], բարբառային համարժեքն է՝ «Շենում ասում էն, վեր Կյո՞ւրո՞ւսեցիք խօսում էն շան լեզվավ» - «Շան լո՞ւզո՞ւ էն պի՞նըցնո՞ւմ, օրիշի լո՞ւզվավ էն խօսում»: Այս դարձվածքը վերաբերում է մարդկանց՝ կոպիտ կամ ոչ հաճելի խոսելաձևին: Գորիսեցիների խոսքը համեմատելով շան լեզվի հետ՝ ցույց է տալիս, որ նրանց խոսքը երբեմն կոպիտ կամ սուր է լսվում ուրիշների կողմից:

9) «Նրա թոռները մեր Բողարի նման հաչում են» - «շատախոսել, ճամարտակել», [էջ 7]

Բարբառային համարժեքն է՝ «Նըրա թոռնեքը Բողարի նըման հաչօցը տո՞ւնո՞մ ին» - «օխտը ժամ խօսում էն, չա՞չա՞նա՞կում»: Այս արտահայտությունը ևս ենթադրում է խոսքի կոպիտ կամ բարձր ձայնային տոն, ինչը կարող է համեմատվել հաչոցին:

«Բողարի նման հաչել»-ը ցույց է տալիս կոպիտ կամ նույնիսկ ագրեսիվ խոսելաոճ:

10) «Նրանք ի՞նչ մարդ են, մեր կծտողի ճակատը նրանց ճակատից արդար է, ափսոս չի մեր «բլադարողնի» լեզուն,- ասում էր Օլինկան» - «ինչ-որ մեկի անբարո մարդ լինելը»: [Էջ 7] Բարբառային համարժեքն է՝ «Նըրանք հիշ մարթ են մեր կըծըտողի իրէսը նըրանց իրէսան հալալ ա» - «համութն ա աթօռը կուրցըրած մարթ, իրէս չօնօղ մարթ»: Այստեղ արտահայտվում է զարմանք այն մասին, որ ինչ-որ մարդիկ կարող են ավելի վատը լինել, քան իրենց շրջապատում հայտնի անձը, ում համարում են չարամիտ: «Կըծտողի ճակատ» բառակապակցությունը հուշում է վատ համբավով մարդու մասին:

11) «Ցամաք հացին Աստված կանչել»- «բավարարվել եղած քչով»: [Էջ 10]

Բարբառային համարժեքն է՝ «Ցըմաքած հացին Աստո՞ւծ ա կանչում» - «Իլա՞ծա՞վ յօլա՞ քինա՞լ»: Այս դարձվածքը նշանակում է, որ մարդը այնքան չքավորության մեջ էր գտնվում, որ հաց անգամ չունեիր, որպիսի բավարարեր իր քաղցը, այդ իսկ պատճառով հացը հավասարեցնում էր Աստծուն կանչելուն:

12) «Հարևանի գոմշի պոչը թրով կտրող» - «վատը ցանկանող, վատամարդ»: [Էջ 78] Բարբառային համարժեքն է՝ «Հըրեվանի կո՞ւմա՞շի պօչը թըրա՞վ կըտրօղ»- «փիսը օզօղ, փիսա՞մա՞րթ»: Այս դարձվածքը նշանակում է, որ մարդը ցանկանում է վնասել ուրիշի բարիքը կամ հաջողությունը՝ նա, ով չարամիտ կերպով փորձում է մեկի նկատմամբ վատություն անել:

13) «Դառն ես դառել Զանգեզուր»- «դժվարին, ցավալի»: [Էջ 147]

Բարբառային համարժեքն է՝ «Աղի-լեղի էս տա՞ռա՞լ Զանգե-
գուր»- «ցըվա՞լի, լեղի »: Այս դարձվածքը ցույց է տալիս ցավը, դառ-
նությունը:

14) «Շուշի քաղաքից ջրի գնով գնել են կայագորի համբարա-
կից, որը գորքի համար ստացել է նոր այլուր... » [էջ53]

Ջրի գնով գնել - «Չափազանց էժան», բարբառային համար-
ժեքն է՝ «Շուշի քղաքան ճի՞րի՞ զընավ առավ են կայագորի մատա-
կարար,վերը գորքի հետի ստացալ ա նոր ա՞լո՞ւր » - «ճի՞րի՞ զին» -
«ի՞ժա՞ն,սաղի հետի հասանելի»: Այս արտահայտությունը օգտա-
գործվում է, երբ ինչ-որ բան ստանում են շատ էժան, այն է՝ անհա-
մեմատ փոքր գնով: Գորիսի բարբառը սիրում է օգտագործել պատ-
կերավոր և հաճախ առօրյա կյանքի հետ կապված արտահայտու-
թյուններ, որոնք արտացոլում են տեղական կյանքի կամ առևտրի
տարրերը:

15) «Ձայնը իջնում է գետնի տակ »: [էջ 53]

«Բարձրաձայն խոսել, բարձրահունչ», բարբառային համար-
ժեքն է՝ «Սա՞ւը քըշանում ա տափին տակը» - «միկրաֆոն կօլ
տըված», «պա՞րցո՞ւր խօսող»:

16) «Վառվում է ճրագը, դեպի դուռն է գալիս գործակատարը»:
[էջ 54]

«Դուռը գալ» - «մոտենալ»,բարբառային համարժեքն է՝ «Վառ-
վում ա կանթեղը, դիբա՞ տո՞ւոն ա քինո՞ւմ դո՞ւքա՞նչին» - «մօտի-
կանալ»: «Դուռը գալ» դարձվածքը այստեղ ունի մոտենալ նշանա-
կությունը:

Այս դարձվածքներն օգնում են բացահայտել Գորիսի
բարբառի հարուստ լեզվական շերտերը, որոնք նկարագրում են ոչ
միայն տեղանքի մարդկանց բնավորությունը, այլև ստեղծում
պատկերավոր խոսք՝ փոխանցելով շրջանի մշակութային
արժեքները:

Գորիսի բարբառի մասին Ա. Բակունցը հրաշալի է արտահայտվել՝ փոխանցելով հիացմունքն ու հուզմունքը, ինչպես նաև «կյորեսերենի» գեղեցկության խորությունը.

«Ինչ չքնաղ լեզու էր կյորեսերենը... Չուտեիր և չխմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես քաղցր և նուրբ հնչյուններով խոսում էր լվացարարուհի Մինան, ինչպես էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում և բառերը նստում էին, ինչպես փափուկ մալաչներ: Հապա Դոլուն Կարին... Կռանում էր սառն աղբյուրի վրա, կուշտ խմում և ջուրը բեղերից կաթկթելով ասում էր խուվա՛յ...և այնպես էր ասում, այդ բառն այնպես էր զրնգում, որ եթե աղբյուրը նորահարս լիներ, ամոթից քողը կքաշեր երեսին... Իսկ Աթա ապերը, երբ բարկանար, այնպես մի ըմբո՛ կասեր, որ Մեղբաքերծը կդրնգար...»²

Դարձվածքային իմաստով մականուններ (Փոթ անուններ)

1) «Ժամհար Պարսեղ», բարբառային համարժեքն է՝ «Ժամկօչ Պա՛րսեղ»: [էջ 1]

Եկեղեցու ժամահարը, որ կռչնակը զարկելով հրավիրում է մարդկանց աղոթելու:

2) «Թեփռած Եփրեմ»: [էջ 12], Թեփռածը հենց բարբառային է, իսկ դարձվածային համարժեքն է՝ «Փըտրըհա՞ն ըրած Էփրեմ»: Մականունը կարող է վերաբերել անձի, ով միշտ խնդիրներ է ստեղծում՝ դժվարությամբ, բայց ուզի կամ ոչ, կրկնում է իր սխալները: Կամ կապված է գլխի հերի հետ, մի մասը չլինելու պատճառով այդպես են բնորոշել:

² Ա. Բակունց, «Կորես», էջ 147:

3) «Կարճիկ բէյ», բարբառային համարժեքն է՝ «Գօ՞ղա՞կ բէյ»։ [Էջ 12], Հասակը կարճ լինելու համար տվել են այդ մականուն-դարձվածքը։ Այդպիսի դարձվածքային մականունները բնորոշ են Գորիսի տարածաշրջանին, երբ արտաքինի մեջ նկատելով թերություն՝ տալիս են նմանատիպ մականուններ։

4) «Ճաղարին Մուղրով», բարբառային համարժեքն է՝ «Կի՞պտա՞վո՞ւն Մուղրով»։ [Էջ 12], Այս մականունի բացատրությունը կապված է աչքերի գույնի հետ։ Բացի դրանից կապույտ գույնը ասոցացվում է պարզության, մաքրության հետ։

5) «Բակունց Վիշապ», բարբառային համարժեքն է՝ «Բակունց Դէվ»։ [Էջ 12]

Կարող է դառնալ մականուն այն մարդու համար, ով բավականին ուժեղ անձնավորություն է։ Օգտագործվել է շատակեր իմաստով։

Այսքանից կարելի է եզրակացնել, որ մականունները հաճախ արտահայտում են մարդու գործունեությունը, բնավորությունը կամ հասկացված հատկանիշները, որոնք կապված են նրա կյանքի որոշակի շրջանի կամ գործի հետ։ Այսպիսի մականունները հաճախ ունեն կատակային կամ բնութագրական բնույթ՝ ցույց տալով, թե ինչու է տվյալ անձը հատուկ ճանաչվել իր միջավայրում։

Օրինանքները և անեծքները՝ որպես դարձվածային միավորներ

«Քեզ մատաղ լինեմ» - «Փաղաքշանքով մեկին դիմելու արտահայտություն, սիրո՝ խանդաղատանքի արտահայտություն»։ [Էջ 8]

Բարբառային համարժեքն է՝ «Քըզ մատաղ ինեմ» - «օրինանքի ձեվ, վեր մթա՞մ սէրը, ուրախօ՞թո՞ւնը տըրանալ արտահայտում էս»։ Այս օրինանքը նշանակում է «որ դու լավ ու բարեհաջող լինես»,

երբ մարդը սիրում կամ հարգում է մեկին և ցանկանում է նրա բարօրությունը:

2) «Ոչ ու փուչ լինի Բաղիրի թոռը»- «կորչի, անհետանա»: [էջ 9]

Բարբառային համարժեքն է՝ «Քինա»- կորչի էտ Բաղիրի թոռնը» - «կորչի թո՞ռը քա՞»: Այս անեծքը սովորաբար կիրառվում է, երբ մարդուն ցանկանում են կործանում կամ անհաջողություն: Այսինքն՝ արտահայտում է բացասական ցանկություն:

4) «Երեսս եկեղեցու ոտի տակ» - «խոնարհումը Աստծո առջև»: [էջ 10]

Բարբառային համարժեքն է՝ «Իրեսը յեգեղեցո՞ւ վէնդին տակը» - «Աստո՞ւծո՞ւ առաջ չօքիլ»: Օրինանք, որը ենթադրում է մարդու ազնիվ ու բարեպաշտ վարքը:

5) «Ոչխարը քեզ պետք է մատաղ անեմ» - «Կյանքը կամ որևէ թանկագին բան մեկին բաշխել՝ նվիրաբերել՝ զոհաբերել»: [էջ 12]

Բարբառային համարժեքն է՝ «Վէշխարը քեզ պիտե՞ր մատաղ ընէի» - «Մի լա՞վ պա՞նի հետի վշէխար մատաղ անիլ, զոհաբերիլ»: Օրինանք է, երբ մարդը փորձում է մեկի նկատմամբ բարեսրտություն դրսևորել:

6) «- Հոդս գլխիդ, - նրանց հետևից ասում էր մի կյորեսեցի պառավ»:

Հոդս գլխիդ-նախատելու արտահայտություն [էջ 13]

Բարբառային համարժեքն է՝ «-Վէղս կըլխիտ, - նըրան յենդան ասում էր մին կյո՞ւրո՞ւսեցի պառավ» - «Փիս-փիս պաներ էր ասում, անէսկ էր տամ»: Բացասական անեծք է, որն օգտագործվում է, երբ ինչ-որ մեկին մաղթում են վատ բաներ՝ շուտափույթ մահ կամ դժբախտություն:

7) «Շեն մնաս, Շոր աղբյուր, իմ հարստությունը դու տվիր»: [էջ 18]

Շեն մնալ-շենանալ, զարգանալ, բարգավաճել:

Բարբառային համարժեքն է՝ «Շէն մընաս, Շօ՞ր ա՞խպո՞ւր, իմ հըրըստօ՞թո՞ւնըս տո՞ւ տըվիր»- «աճիլ, շէնանալ»: Օրինանք է, որը միտված է մարդու հաջողությանն ու բարեկեցությանը, քանի որ «Շոր աղբյուրը» հանքային աղբյուրն է, որը կարող է բարօրություն ապահովել:

8) «Փառք տալ Աստծուն»- «գոհ՝ շնորհակալ լինել, շնորհակալությունը հայտնել» [էջ 30], բարբառային համարժեքն է՝ «Փառք տալ Աստուծուն»- «գօհօ՞թո՞ւնը արտահայտիլ, շնօրհակալ ի՞նի՞լ»: Օրինանք է, որը օգտագործվում է Աստծո նկատմամբ երախտագիտություն կամ շնորհակալություն հայտնելու համար:

9) «Բարի լույս տալ»- «ողջունել, օրը սկսել բարևով»: [էջ 45]

Բարբառային համարժեքն է՝ «Պա՞ր լո՞ւս տալ»- «օրը սրկըսիլ պա՞րլո՞ւսավ»: Օրինանք է, որով մաղթում են բարություն ու բարօրություն մեկին՝ նախքան նրա օրվա մեկնարկը:

10) «Շնորհավոր լինի, բարով մաշես»: [էջ 53]

«Ասվում է որպես շնորհավորանք ու բարեմաղթություն նոր զգեստի առթիվ». բարբառային համարժեքն է՝ «Շնօրհավօր ինի, պարավ մաշես» - «ասում են հունց վեր շնօրհավօրանք շօ՞րի կամ հինչ վեր մի նօր պա՞նի հէտի»: Օրինանք, երբ մեկը մի նոր բան է գնում, որպես դրական արտահայտություն ասում են այդ դարձվածք-օրինանքը: Դա կարող է նշանակել նաև, որ մարդը ուրախ լինի ու առատաձեռն լինի:

11) «Աստված բարին տա» - «Օրինանք, այսինքն Աստծու շնորհիվ բարօրություն լինի» [էջ 59], բարբառային համարժեքն է՝ «Աստուծ պա՞րի՞ն տա» - «օրինանք, Աստո՞ւծո՞ւ շնօրբավ բարօ՞րօ՞թո՞ւն ինի»: Սա բարի ցանկություն կամ օրինանք է, որը կարող է կիրառվել դիմացինին բարեհաջողություն ու երջանկություն մաղթելու համար:

12) «Աստված գլխիդ խռով չանի» - «պաշտպանել»: [Էջ 129]

Բարբառային համարժեքն է՝ «Աստուծ կըլխիդ խըռով չանի - «պըշտպանի՞լ»: Արտահայտում է ցանկություն, որ մարդը չկանգնի դժբախտության կամ մտավոր խռովությունների իր կյանքում: Կարող է նաև նշանակել «Աստված քեզ պահպանի»:

Այսպիսով, ենթադրվում է, որ Ա. Բակունցը, կերպարներին խոսեցնելով օրինանքների և անեծքների լեզվով, ցանկանում էր ցույց տալ այն երկվորյունը և հակասությունները, որոնք գոյություն ունեին հասարակության մեջ: Օրինանքներն ու անեծքները հանդես են գալիս որպես մարդկային ապրումների արտահայտություն՝ ներկայացնելով մարդու հարաբերությունները շրջապատի նկատմամբ: Այս կերպ հեղինակը միաձուլում է ներանձնային հոգեվիճակներն ու արտաքին աշխարհը՝ ստեղծելով հնչեղ ու հուզիչ գեղարվեստական պատկերներ:

«Այդքան գեղեցիկ էր Կյորենսի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր՝ նախշերով ու վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Մինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փոված էր Հաստ Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնանում և մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները...³»

«Կյորենս»-ում, որը ներկայացնում է գյուղական հասարակության խնդիրները, բարբառը հատուկ նշանակություն ունի՝ որպես կերպարների սոցիալական դասի ու բնավորության արտահայտություն: Կյորենսի նման կոշտ ու կյանքից բաժանված կերպարի լեզուն լի է պարզ ու կոշտ դարձվածքներով, որոնք բնորոշ են նրա բնակավայրը և կյանքի հանդեպ ունեցած աշխարհընկալումը: Այս արտահայտությունները հաճախ վերաբերում են անձնական դժվարություններին: Օրինակներ՝

³ Ա. Բակունց, «Կյորենս», էջ 147:

1) «Ոսկորը հաստ մարդ» [էջ 39], «Ոսկորը հաստ» - «գորեղ, ուժին դիմակայող»: Բարբառային համարժեքն է՝ «Վէսկըռը հաստ մարթ» - «ուժեղ, հրզոր»:

2) «Մարդը քանի գնում ժեռանում է» [էջ 39], «ժեռանալ-փոքրանալ, վայրենանալ»:

Բարբառային համարժեքն է՝ «Մարթը քա՞նի՞ թո՞ւմ ա՞րբրանում ա» - «վայրենանում ա, կուճիրա՞նո՞ւմ ա»:

3) «Ընկուզենիները, որ ով գիտե, քանի 100 տարի աղմկում էին» - «անմարդաբնակ լինելու հետևանքով ընկուզենիներն էին աղմկում» (փոխաբերական իմաստով), [էջ 10], բարբառային համարժեքն է՝ «Ճըղուպերնի՞ն հուվ ա՞ գո՞ւղո՞ւմ արթէն քանի՞ հա՞րո՞ւր տարի ա՞ սա՞ս էն անում - «մըրթկօ՞թո՞ւնան չօր», «ցամաք տեղ ինիլա՞վ ճըղո՞ւպերներն էն սա՞ս հանում»:

Հեզնական արտահայտություններ կամ դարձվածքային արժեքով միավորներ

Բակունցը հաճախ իր ստեղծագործություններում օգտագործում է կատակ և հեզնանք, որպեսզի բացահայտի սոցիալական խայտառակությունները կամ մարդկանց բնորոշ թերությունները: Այս ենթաթեմայի շրջանակում կարող ենք վերլուծել, թե ինչպես կատակն ու հեզնանքը (որոնք հաճախակի դրսևորվում են Գորիսի բարբառի մեջ) դառնում են մի տեսակ արձագանք կամ քննադատություն՝ երկրի կամ ժամանակի խառնաշփոթին ու անհավասարությանը, օրինակներ՝

1) «Դեմքը զայրությից կարմրել»: [էջ 113], բարբառային համարժեքն է՝ «Ի՞րեւը ջըղըյնընա՞լա՞ն կըրմըրո՞ւմ էր» - «հըռըշնիլ, կրմըրտա՞կի՞լ»: Այս արտահայտությունը կարող է արտահայտել մի մարդու հիստերիայի կամ գրգռվածության աստիճանը, երբ նա չի կարողանում պահպանել ինքնատիրապետումը:

2) «Դուռը ծալեցին և կպցրին պատին»: [էջ 69]

Բարբառային համարժեքն է՝ «Տո՞ւնը ծըլեցին ու կըպցրին պատին - «շըրըխկըցնիլ, փակիլ, թըրըխկըցնիլ»:

3) «Մարդիկ մըջունի պես կրում են պլուրը» - «աշխատասեր, ջանասեր», [էջ 50], բարբառային համարժեքն է՝ «Մարթիք Մըրչո՞ւնի նըման կըրում են տանում ա՞լո՞ւրը» - «մըրչո՞ւնի նըման ըշխաղի - «ղօջաղօ՞թո՞ւն, քիշեր-ցիրէկ ըշխաղօղ»: Այս արտահայտությունը ներկայացնում է մարդկանց դժվարին աշխատանքը՝ օգտագործելով «մըջունի պես» համեմատությունը՝ ցույց տալով, որ մարդիկ ծանր և դանդաղ աշխատանք են կատարում:

4) «Ճնճղուկների երամի նման լռել»: [էջ 61]

Բարբառային համարժեքն է՝ «Սուս էն կընում հունց վեր ծըտերի խումբը - «լըռօ՞թո՞ւն, սասը կըտրած վիճակ, ծըպտված վիճակ»: Այս արտահայտությունը օգտագործվում է, երբ փորձում են պատկերացնել մարդկանց խմբի՝ այնպիսի մի իրավիճակ, երբ նրանք կարծես չեն լսում կամ չեն արձագանքում (ինչպես ճնճղուկները, որոնք իրար հետ շատ գոռգոռ են լինում, բայց անհայտ պատճառներով՝ այստեղ՝ լռում են): Սա հեգնանք է՝ մարդու կամ մարդկանց «կյանքը խճճող» անզգույշ վարքի նկատմամբ:

5) «Ուռած ու արյունով լցված աչքեր» [էջ 70]

Բարբառային համարժեքն է՝ «Օռած, արո՞ւնլիվա՞ աշկեր - «օքնական չօնօղ մարթ, ծա՞խօ՞րթ մարթ»: Արտահայտությունը օգտագործվում է, երբ ցանկանում են նկարագրել մեկի չափազանց գրգռված վիճակը կամ անդառնալի էմոցիաները՝ որոնք կարող են հեգնանքով դրսևորվել: Ուռած աչքերը ու արյունը խորհրդանշում են մարդու խառնվածքի կամ ֆիզիկական վիճակի ծայրահեղությունը: Սովորաբար այսպիսի նկարագրությունը ծաղրում է նրա էմոցիոնալ անկառավարելիությունը:

Սույն աղյուսակի տեսքով ներկայացնում ենք գրական լեզվով և բարբառային տարբերակներով դարձվածքների համակցությունը:

	Գործիսի բարբառ	Գրական համարժեք
1	Կօշտ խըմիլ	Կուշտ խմել- բավականանալ, հագենալ
2	Համու՞թա՞ն քօղը քաշում էր իրեսը	Քողը քաշել երեսը-ամաչել, շիկնել
3	Լո՞ւզո՞ւն պըտըտվում էր	Լեզուն պտույտք է անում-մի բան ասել կարողանալ՝ հանդգնել
4	Աղի-լէ՞ղի էս տա՞ռա՞լ Ջանգեզուր	Դառն էս դառել Ջանգեզուր- դժվարին, ցավալի
5	Հօքելօր շահ չինիլ	Հոգևոր շահ չունենալ-անկրոն լինել, անշահախնդիր չլինել
6	Տեղաց անիլ	Տեղաց անել-տեղավորել, տեղ հատկացնել, բնակեցնել
7	Քէթը պա՞րցո՞ւր	Քիթը բարձր-գոռոզամիտ, հպարտացող, ինքնահավան
8	Կիլօխը փեշի տակ քինա՞լ	Գլուխը փեշի տակ գնալ-առանց որևէ մեկին խանգարելու գնալ
9	Մըռած լո՞ւզու	Մեռած լեզու-այն լեզուները, որոնք դադարել են որպես կենդանի հաղորդակցման հիմնական միջոց օգտագործվելուց:
10	Թօռնէքը Բօղարի նըման ին հաչօցը տո՞ւնտ՞ւմ	Թոռները մեր Բողարի նման են հաչում-շատախոսել, ճամարտակել
11	Կ(յ)ո՞ւրո՞ւտ՞ւմը ծընված, ապրած մարթ	Ջանգեզուրի մարդ-գործիսեցի մարդ, Գործսում ապրած, ծնված

12	Կի՞լօ՞խըս մեղրուտ է՞մ ըրալ	Գլուխը մեղրոտ չանել-չբավարարվել, գոհունակություն չարտահայտել
13	Քի՞նսս-կօրչի էտ Բաղիրի թօռնը-կօրչի թօ՞ռը ք(յ)ս	Ոչ ու փուչ լինի Բաղիրի թոռ-կորչի, անհետանա
14	Ծօ՞ր տալալ ու ծանդըր-ծանդըր խօսալ - մա՞նդա քի՞ցիսա՞վ խօսալ	Խոսել ծանր-ծանր, ծոր տալով-թույլ, դանդաղ խոսք
15	Թե՛վը կօտրած հիլի՞շտրա՞կ	Թևը կոտրած հրեշտակ-անչափ չքնաղ էր, բայց այդպես են կոչել, որովհետև քայլում էր ձախ ուսը մի քիչ բարձր:
16	Շան լո՞ւզվա՞վ խօսիլ	Շան լեզվով խոսել-օտար լեզվով խոսել
17	Սարքած կուկլա	Շինովի տիկնիկ-Գորիսեցիք այդպես էին ասում օտար կանանց, ովքեր պճնազարդ էին:
18	Կըլխին մեչ հո՞ւշ մընալ	Գլխի մեջ հուշ մնալ-համակենտրոնանալ, հիշողության մեջ մտապահել
19	Ծօ՞րո՞ւմ պըռանչօղ	Ձորում բառաչող – անպատասխան օգնություն խնդրող, կանչող
20	Մի նըստիլա՞վ օխտը հաց օտիլ	Մի նստելով 7 հաց ուտել-եռանդուն, ախորժակով, շատակեր մարդ
21	Օխտը տըռա՞ն կլանչօղ շօն	7 դռան հաչող շուն- տանող-բերող, բամբասկոտ
22	Տո՞ւռը պատմիլ	Դուռը պատմել-գաղտնիքները բացահայտել

23	Կյօրէսը մըռնո՞ւմ էր	Գորիսը մեռնում էր-վերանալ, չքանալ
24	Մըռնո՞ւմ էր Խո՞ւռո՞ւփ ծօ՞րի կաղնին	Մեռնում էր Խուռոփ ձորի կաղնին-չորանալ
25	Խօ՞րատա՞կն էր կօշում ժըղօվո՞ւրթը	Անդունդն էր սուզվում ազգը-վերանալ, չքանալ, անհետանալ
26	Կո՞ւմա՞շի պօշը թըրավ կըտրօղ	Գոմշի պոշը թրով կտրող -վատը ցանկանող, վատամարդ
27	Ըղվէսի նըման հաշիլ	Աղվեսահաշ տալ-կատաղել, գայրանալ, լրբանալ
28	Ճըրըհա՞ն անիլ	Դեղամահ անել-սպանել, ոչնչացնել
29	Կապը կըտրիլ	Կապը կտրել-անկարգանալ, սանձարձակ դառնալ
30	Ա՞լո՞ւրը ըպառիկ յէր օ՞նիլ	Ալյուրը ապառիկ վերցնել-պարտքով գնել
31	Պէճա՞ն ծի տա՞ռնա՞լ	Բեռան ձի դառնալ-ծանր պարտավորություն, որ իշխանությունը կամ զօրեղը դնում է հպատակի կամ ենթակա անձի վրա:
32	Դատ անիլ	Դատ անել-կովել, վեճ ստեղծել
33	Կախ կըտան պալտօնավօրներին	Պալտոնավորներին կկախեն-կսպանեն օտարականներին
34	Կի՞լօ՞խը փեշի տակ քինա՞լ	Գլուխը փեշի տակ գնալ-առանց որևէ մեկին խանգարելու գնալ
35	Ա՞րո՞ւնի գին վըրօշիլ	Արյան գին որոշել-վարձատրություն (սպանության, դավաճանության և այլնի դիմաց)

36	Մըհակ պիրցըցնիլ	Մահակ բարձրացնել-վախեցնել, սարսափեցնել
37	Գի՞ղա՞լա՞վ ճընապան ծըռիլ	Դիտմամբ ծռել ճանապարհը-շեղել, խառնել
38	Մաքուր լոթթո՞ւն	Ազնիվ լոռություն-հանդարտություն, խաղաղություն
39	Էշ կըտրած ըշկե՞րա՞վ յեշիլ	Մառած աչքերով նայել-զարմանքից՝ հուզմունքից քարանալ:
40	Օռած, ա՞րթո՞ւնլիվա աշկեր	Ուռած ու արյունով լցված աչքեր-դժբախտ մարդ, անկարեկից մարդ
41	Ընտանիքի կեխտը	Ընտանեկան կեղտ- ներքին անբարո Վիճակ
42	Պատանդ էր կո՞ւրվո՞ւմ չարչիին	Գերի գրվել վաճառականին-ստրուկ, ճորտ դառնալ
43	Մա՞ն կա՞լ	Ման գալ-գտնել, փնտրել

Անփոփում

Այսպիսով՝ նկատում ենք, որ «Կյորես» վիպակի դարձվածային համակարգը ձևավորվել է Գորիսի բարբառում առկա նման ձևերի առկայությամբ: Դրանց մի մասը տեղ է գտել հերոսների խոսքում, իսկ մյուս մասը՝ հեղինակային խոսքաշարում՝ գրական տարբերակով: Փաստորեն, Ա. Բակունցի ստեղծագործությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ հեղինակի լեզվի և լեզվամտածողության համար հիմք են եղել ժողովրդական բառն ու բանը, որոնք էլ հիմնորեն ձևափոխվել են, ստացել գրական տեսք: Գեղարվեստականացման հնարքները, դարձվածքային միավորների գրական տարբերակի փոխադրումները ավելի են ընդգծել

ստեղծագործությունների ժողովրդականությունը, պատկերավորությունը:

Qumuhc Mher, Bakunts Alla - Phraseological units in Aksel Bakunts' novel "Kyores" (comparative examination). -Studies related to idioms are quite numerous. Typically, they often focus on the analysis of an author, their works, the idiomatic system of a language, literary language, vocabulary, and idiomatic expressions. In this case, the subject of our research concerns the idioms in Aksel Bakunts' works that have dialectal origins and still require further study. The work in question is Aksel Bakunts' "Kyores", a masterpiece of Armenian literature, where Bakunts uses idioms and dialect to convey the psychology of his characters, their social status, and the realities of life.

Keywords: idiom, dialect, Goris, "Kyores", Aksel Bakunts

Research Methodology

As we know, idioms originate from various types of word combinations through resemanticization and the acquisition of figurative or metaphorical meanings. Most of the idioms in Aksel Bakunts' works, being dialectal and commonly used in spoken language, require a different approach to their study. In this regard, the comparative method is the most effective. This involves comparing the idiom extracted from the text with its equivalent idiomatic unit found in the live speech of the Syunik-Artsakh dialectal region. The goal is to identify differences and similarities, as well as possible parallels in literary Armenian and its colloquial variants.

Research Material

The material provided by theoretical literature is corroborated by

the idioms included in Aksel Bakunts' works, as well as their dialectal variations. During the analysis, it became necessary to study and reveal the author's tendencies, methods, and techniques for the literary adaptation of idioms.

Кумунц Мгер, Бакунц Алла - Фразеологические единицы в романе Акселя Бакунца «Кёрес» (сопоставительное исследование).- Работы, посвященные фразеологизмам, достаточно многочисленны. Обычно встречаются исследования, связанные с фразеологической системой какого-либо автора, произведений, языка, литературного языка, лексики и фразеологического состава. В данном случае предметом нашего исследования являются фразеологизмы в произведениях Акселя Бакунца, имеющие диалектное происхождение и до сих пор нуждающиеся в освещении. Исследуемое произведение - «Кёрес» Акселя Бакунца, шедевр армянской литературы, в котором Бакунц использует фразеологизмы и диалект для выражения психологии персонажей, их социального положения и отражения действительности.

Ключевые слова: фразеологизм, диалект, Горис, «Керес», Аксель Бакунц.

Метод исследования

Как известно, фразеологизмы возникают из различных видов словосочетаний путем переосмысления и приобретения переносного значения. Большинство фразеологизмов в произведениях Акселя Бакунца, будучи диалектными и употребляемыми в живой речи, требуют особого подхода к изучению. В этом отношении наиболее целесообразным является сравнительный метод: то есть извлеченный из текста фразеологизм сопоставляется с соответствующей

фразеологической единицей, существующей в живой речи диалектного ареала Сюника-Арцаха. При этом выявляются различия и сходства, а также возможные параллели с литературным армянским языком и его разговорными вариантами.

Материал исследования

Материал, предложенный теоретической литературой, подтверждается фразеологизмами, включенными в произведения Аксея Бакунца, а также их диалектными вариантами. В процессе анализа возникла необходимость изучить и выявить тенденции автора к литературизации фразеологизмов, а также его методы и приемы их использования.